# ՍԵՐՆ ՈՒ ՆՎԻՐՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ ԴԵՊԻ ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑԻՆ, ՀԱՅ ԺՈՂՈՎՈՒՐԴՆ ՈՒ ՀԱՅԱՍՏԱՆԸ ՕԴԻ ՈՒ ՋՐԻ ՊԵՍ ԱՆՀՐԱԺԵՇՏ ԵՆ...

Ավագ չորեքշաբթի, մարտի 26-ի երեկոյան ժամը 17$^{30}$-ին, Հոգևոր Ճեմարանի հանդիսությունների դահլիճում տեղի ունեցավ հանդիպում բանաստեղծ, Ճեմարանի նախկին սան ու դասախոս Վաչագան Հովհաննիսյանի հետ:

Հանդիպման սկզբում Հոգևոր Ճեմարանի տեսուչ Հայկազուն ծ. վրդ. Նաջարյանը նախ շնորհակալություն հայտնեց Վ. Հովհաննիսյանին, որ նա կարողացավ ժամանակ գտնել՝ հանդիպելու Ճեմարանի սաների հետ և կարևորեց այն գաղափարը, թե որքան անհրաժեշտ է անդրադառնալ ավագ և նախորդ սերունդների հետ կապված հիշողություններին, այնտեղից դասեր քաղելու և ապագայում սխալներից խուսափելու համար: Տեսուչ Հայր Սուրբն իր խոսքը եզրափակելով՝ մասնավորապես նշեց. «*Առաջիկայում դեռ կլինեն հանդիպումներ, որոնք կներկայացնեն բանաստեղծ Վաչագան Հովհաննիսյանի անցած ստեղծագործական ուղին*»:

Նախքան քննարկմանն անցնելը, Վ. Հովհաննիսյանն իր խորին շնորհակալությունը հայտնեց Ճեմարանի տեսչական կազմին՝ այս առիթի համար, ապա ներկայացրեց իր հիշողությունները, որոնց բնաբան էր ընտրել Պարույր Սևակի «Եվ այր մի Մաշտոց անուն» պոեմից հետևյալ տողերը.

*«...Այնտեղ է լոկ սխրանքն սկսվում,*
*Ուր վերջանում է ամեն մի հնար...»:*

Վ. Հովհաննիսյանը հանգամանորեն ներկայացրեց իր՝ Ճեմարան ընդունվելու պարագաները, 1945-1954 թթ. Ճեմարանի տեսուչ Մինաս Մինասյանի ծավալած գործունեությունը, այդ տարիներին ուսանողների առօրյա կյանքը, պատմեց երջանկահիշատակ Գևորգ Զ Հայրապետի՝ Հոգևոր Ճեմարանի նկատմամբ տածած մտահոգության մասին, Մայր Աթոռն անհատի պաշտամունքի տարիներին և այլ հիշարժան ու հետաքրքիր դեպքերի վերաբերող պատմություններ: Վերջացնելով իր հուշերի շարքը, Վ. Հովհաննիսյանը, դիմելով ուսանողներին, ի մասնավորի նշեց. «*Գիրք կկարդաք թե չէ, դաս կսովորեք թե չէ, բայց սերն ու նվիրվածությունը դեպի Հայոց Եկեղեցին, Հայ ժողովուրդն ու Հայաստանը ձեզ՝ ապագա հոգևորականներիդ, օդի ու ջրի պես անհրաժեշտ են...*»:

Այնուհետև Վ. Հովհաննիսյանի հետ կապված իր հուշերով հանդես եկավ Հոգևոր Ճեմարանի անգլերենի դասախոս, Վ. Հովհաննիսյանի ճեմարանական ու համալսարանական ընկեր Արտաշես Բալաբանյանը:

Հավարտ Ա. Բալաբանյանի խոսքի, ներկաների հարցերին սիրով պատասխանեց Վ. Հովհաննիսյանը:

Հանդիպման վերջում տեսուչ Հայր Սուրբը մեկ անգամ ևս շնորհակալություն հայտնեց Վ. Հովհաննիսյանին, ապա նշեց, որ տեսչական կազմը նմանատիպ հանդիպումներ կաշխատի հաճախակի կազմակերպել, քանի որ «*մեր նպատակն է վերականգնել Գևորգյան Ճեմարանի ավանդույթները, որպեսզի ինչպես անցյալում, այնպես էլ այսօր և գալիքում Հոգևոր Ճեմարանի սաները տարբերվեն մյուս ուսումնական հաստատությունների ուսանողներից իրենց առաքինի վարքով, կրթվածությամբ ու մայրենի լեզվի անաղարտությամբ*»:

*ԱՐԹՈՒՐ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ*
*ՀՈԳԵՎՈՐ ՃԵՄԱՐԱՆԻ Բ ԼՍԱՐԱՆԻ ՍԱՆ*

*ՎԱՉԱԳԱՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ*

## ԱՆՁԻՆՔ – ՆՎԻՐՅԱԼՔ

Հարյուր հազար տարվա երգ կա երգիս մեջ,
Հարյուր հազար տարվա երգի մեկնություն.
Հարյուր հազար տարվա ձեռք կա ձեռքիս մեջ,
Հարյուր հազար տարվա ձեռքի վարժություն.

Հարյուր հազար տարվա գիր կա գրիս մեջ՝
Հարյուր հազար տարվա գրի գոյություն.
Հարյուր հազար տարվա փորձ կա փորձիս մեջ՝
Հարյուր հազար տարվա փորձի փրկություն.

Հարյուր հազար տարվա ճամփա՝ ճամփիս մեջ,
Հարյուր հազար տարվա ճամփի ճշտություն.
Հարյուր հազար տարվա ցավ կա ցավիս մեջ՝
Հարյուր հազար տարվա ցավի ծովացում.

Հարյուր հազար տարվա գինի կա իմ մեջ՝
Հարյուր հազար տարվա գինու խենթություն.
Հարյուր հազար տարվա սեր կա սիրույս մեջ՝
Հարյուր հազար տարվա սիրո սիգացում.

Հարյուր հազար տարվա միտք կա մտքիս մեջ՝
Հարյուր հազար տարվա մտքի մեծություն,
Հարյուր հազար տարվա սիրտ կա սրտիս մեջ,
Հարյուր հազար տարվա սրտի սլացում.

Հարյուր հազար տարվա հոգի կա իմ մեջ՝
Հարյուր հազար տարվա հոգու հայտնություն.
Հարյուր հազար տարվա լեռ կա լեռանս մեջ՝
Հարյուր հազար տարվա լեռան լռություն.

Հարյուր հազար տարվա բեռ կա բեռանս մեջ՝
Հարյուր հազար տարվա բեռան բռնություն.
Հարյուր հազար տարվա ծով կա ծովիս մեջ՝
Հարյուր հազար տարվա ծովի ցոլացում...

Հարյուր հազար տարվա կոիվ կա իմ մեջ՝
Հարյուր հազար տարվա կռվի կայացում.
Հարյուր հազար տարվա քեն կա քինուս մեջ՝
Հարյուր հազար տարվա քինու քարացում...

Հարյուր հազար տարվա կարոտ ու մրմուռ՝
Հարյուր հազար տարվա գերված հող՝ մի բուռ...

*20.12.93 թ.*

# ՁԵՆ ՏՈՒՐ, ՁԵՆՈՎ ՕՀԱՆ

Թալանվածիդ թալանեցին նորից,
Ձյունը նորից քո բաց գլխին ծաղկեց,
Ձեն տուր, Օհա՛ն, Դավթին հանի՛ր հորից,
Ահա նորից Սասնո աստղը խամրեց:

Ձնեպսակ լեռդ նորից ձնեց,
Սառցիդ նորից սառույց նստեց՝ անդուր.
Մհերի ձին քարանձավից ձայնեց, –
– Ելի՛ր, Օհա՛ն, քո ծոերին ձեն տուր:

Հայորդիներդ անօթևան, թափառ,
Ինքնահալած կռունկների նման,
Ո՞ւր են գնում այսպես՝ տխրաբարբառ,
Օ՛, ետդարձի ձեն տուր նրանց, Օհա՛ն:

Ձեն տուր, Օհա՛ն, աղեղնավոր Հայկին,
Արտավազդին՝ զնդաններում կալված,
Թող արթնանա՛ Տիգրան Մեծի ոգին՝
Սուրբ Վարդանանց կարմիր ուխտով օծված:

Ձեն տո՛ւր, Օհա՛ն, Մարաթուկի սարից,
Մեր վանքերի գմբեթներից՝ թափուր,
Ձեն տո՛ւր, Ձենո՛վ Օհան, գա՛ղթ է նորից,
Ձայնի՛ր ահեղ ձայնովդ Աստվածատուր:

Ով քնած է, թող արթնանա՛, Օհա՛ն,
Ով արթուն է՝ ելնի՛ գոտեպնդված,
Ոտքո՛վ, վաղվաղակի՛ թող տո՛ւն դառնա,
Քանի տունն իր հիմքից դեռ չի քանդված:

Ձեն տուր, Օհա՛ն, կռունկներիդ բոլոր,
Քարվաններիդ ու նավերիդ՝ լացող,
Հողագնդի չորս ծագերից բոլոր,
Թող տո՛ւն դառնան, դառնան երկի՛ր ու՝ հո՛ղ:

Ձեն տուր, Ձենո՛վ Օհան...

*20.12.93 թ.*